11770

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«19» 08 2022թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

## ԲՓ N 0122-22

***Ձեռնարկողը՝*** ***«Վելլի Բեյ» ՍՊԸ***
*Ք. Երևան, Միկոյան 9/3*

***Գործունեությունը՝*** ***Նոր-Նորք վարչական շրջանի Միկոյան փողոց 9/3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*քաղաք Երևան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0122-22

<19> 08 2022թ.

***«Վելլի Բեյ» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան փողոց 9/3 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

**Ներածական մաս.**

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «Վելլի Բեյ» ՍՊԸ |
| Փաստաթղթի տեսակը՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ |
| Գործունեության կատեգորիա՝ | Գ կատեգորիա |
| Տեղադրման վայրը՝ | ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան |

«Վելլի Բեյ» ՍՊԸ կողմից Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան փողոցի 9/3 հասցեում նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2022թ. ապրիլի 29-ի N01/18-07/2-40120-318 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա (նախագծման թույլտվության ժամկետը սահմանված է երեք տարի), անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 3.683053հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատարածքը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան Ա. Միկոյան փողոց 9/3 հասցեում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի արևելյան եզրամասում, Նորքի հրաբխային սարավանդի բարձրադիր կենտրոնական մասում, իրենից ներկայացնում է դելյուվիալ լանջի մի հատված, որտեղ ռելիեֆը թեք է՝ արևելքից դեպի արևմուտք անկումով, ռելիեֆի պայմանական նիշերը տատանվում են 160-183 մետրերի սահմաններում: Տարածքում մինչև 25մ խորության վրա

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքը իրենից ներկայացնում է մասնակի կառուցապատված տարածք: Հողամասում առկա է քանդման ենթակա սպասարկման սրահ 660.1մ², օժանդակ շինություն 310.8մ², էլ.ենթակայան 51.3մ², պահակակետ 7.2մ², պարիսպ 21.81մ², ծածկ 228.1մ² մակերեսով:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի հարակից տարածքում՝ Գալշոյան փողոցի վրա, գտնվում է Սբ.Սարգիս եկեղեցին: Համաձայն հայտի՝ եկեղեցին ներառված չէ պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում և պահպանման գոտու սահմաններ չունի, սակայն ըստ տեղեկատվության՝ աշխատանքային նախագծի մշակման փուլում հաշվի են առնվել քաղաքաշինական միջավայրի առանձնահատկությունները: Համաձայն ներկայացված գծագրական նյութի շինհրապարակի հեռավորությունն եկեղեցու գմբեթից 90-110 մետր և ավելին է:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես – 36830,53մ²,
- կառուցապատման մակերես – 9979մ² -27,09 %·
- մայթ, ճանապարհ, ճեմուղի – 11993,53մ²-32,6%,
- կանաչապատման մակերես – 14858 մ²-40,31 %,
- ընդամենը՝ 536 ավտոկայանատեղի -92 %,
- բնակարանների թիվը՝ 583 բնակարան:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է կառուցել 12 մասնաշենքերից բաղկացած բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր. 5 բազմահարկ նմանատիպ 16 հարկանի միասեկցիոն բնակելի շենքեր (մասնաշենքեր՝ 2, 4, 6, 9, 10), 1 բազմասեկցիոն առավելագույնը 13 հարկանի բնակելի շենք (մասնաշենք՝ 11), 2 խանութ (մասնաշենքեր՝ 3, 5), 1 մարզասրահ (մասնաշենք 12), 1 ստորգետնյա հարկով՝ կայանատեղեր (մասնաշենքեր՝ 1, 7, 8): Նախատեսվում է կառուցել բացօթյա հանգստի և խաղերի հարթակներ, կայանատեղեր, սալվածքներ, հետիոտն անցուղիներ:

Մարզասրահի մասնաշենքում նախատեսվում է 2 լողավազան՝ 77մ² և 337մ² մակերեսներով: Լողավազանների ծավալը 0,000 նիշում՝ 620մ³, տանիքում 98.5մ³: Ջրի մաքրման հաճախականությունը՝ 5 ժամում 1 շրջադարձային պտույտով, ֆիլտրացիոն համակարգով և ռոբոտ փոշեկուլով: Ջրահեռացումը կատարվելու է ինքնահոս եղանակով դեպի կոյուղու բակային ցանց: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը նախատեսվում է միացնել նախագծվող թաղամասի արտաքին ցանցին: Տանիքում նախատեսվում է տեղադրել ջրատաքացուցիչներ և 32 հատ արևային մարտկոցներ՝ 15 կՎտ հզորությամբ:

Բնակարանների և կոմերցիոն տարածքների ջեռուցումը նախատեսվում է իրականացնել անհատական կաթսաների միջոցով: Կաթսայատունը տեղակայված է հողամասի հարավային սահմանի մոտ, մոտակա բնակելի շենքից 32.3մ հեռավորության վրա: Ծխատարի բարձրությունը 4.2մ՝ կաթսայատան տանիքի պիպի նիշից: Կաթսայատան գազի ծախսն ընդունված է 120 նմ³/ժ, ջրային կաթսայի ջերմային հզորությունը՝ 1000 կՎտ:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է կատարել համաձայն գործող նորմերի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց

թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանները և վիտրաժները, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են 60% ջերմության խնայողություն:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում, համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 4.540ԿՎԱ հզորությամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Նախատեսվում է երկու թաղամասերը սպասարկող տրանսֆորմատորային էլ.ենթակայանի կառուցում՝ 10.0ԿՎ հզորությամբ, էլեկտրասնումն իրականացվելու է ԵԵ ԱՆԻ10ԿՎ 1-ին, 2-րդ հատոններից:

Գազամատակարարումը 2000մ$^3$/ժամ ծախսով համաձայն տեխնիկական պայմանի կիրականացվի Ջրվեժ ԳԲԿ սնող 300մմ կողմնատար գազատարի 0.05կմ-ից:

Բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել d=250մմ Գալշոյան փողոցով անցնող ջրատարից, իսկ կոյուղին հնարավոր է միացնել Դավիթ-Բեկի փողոցով անցնող d=400մմ կոյուղատարին, հեղեղատարը՝ Միկոյան փողոցով անցնող d=300մմ հեղեղատարին:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 74.0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ$^2$, որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար նախատեսվող համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 190000մ$^3$ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 160000մ$^3$ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք, պարբերաբար կիրականացվի ջրցան՝ փոշեգոյացումը կանխելու նպատակով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է՝ տարեկան մեկ մարդու հաշվարկով 70կգ 150x5.8x74/1000= 64.38տ և շինարարական աղբն է՝ 1480մ$^3$ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավեցման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (150 մարդ), ինչը կազմում է 8168մ$^3$/շին.ժամ: 1000մ$^2$ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 11498մ$^3$/շին.ժամ: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25մ$^3$ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500մ$^2$ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 14858մ$^2$: Տարածքում առկա հողի բերրի շերտը՝ մոտ 9200մ$^3$ կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքերի ընթացքում: Տարածքում նախատեսվում է տնկել թույա, ֆլորսիցիլիա, հենոմելես, սիրիական հիբիսկուս, ճապկի՝ 492 հատ, դեկորատիվ ծառեր, թխկի՝ 200 հատ, ծաղկանոց՝ 522մ$^2$, ճիմ, սիզամարգ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով կառավարման պլանով նախատեսվող բնապահպանական միջոցառումներն են՝

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարարության ընթացքում հատկացնել 4.905.000 դրամ:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** Համաձայն նախնական հայտի՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է մասնակի կառուցապատված տարածքի վրա, ինչը չի առաջացնելու շրջակա միջավայրի վրա լրացուցիչ ազդեցություններ: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

## Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Գործունեությունն իրականացնել՝ առաջնորդվելով «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի դրույթներով:
- Մինչև գործունեության իրականացումը՝ կանաչապատման նախագիծը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի հաստատմանը՝ պահպանելով հայտում ամրագրված 40.31% կանաչապատման մակերեսը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Ապահովել հայտում նախատեսված՝ գործունեության շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացման, շինարարական հրապարակների պարսպապատման, ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերի և շինությունների համապատասխան բարձրության անթափանց թաղանթով ծածկման միջոցառումները:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

- Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էներգախնայողության և էներգաանվտանգության հետ կապված միջոցառումներն իրականացնել՝ համաձայն ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջների:

- Անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93–Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ 30-01-2014 և բնակելի շենքեր Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր»՝ ՀՀՇՆ 31-01-2014 նորմերի պահանջները:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշամն 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վելլի Բեյ» ՍՊԸ-ի կողմից Երևանի Նոր-Նորք վարչական շրջանի Միկոյան 9/3 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան